ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Արդի պայմաններում յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման, առանցքային և առաջնահերթ խնդիրներից է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման ու խթանման համալիր ծրագրերի մշակումն ու արդյունավետ կիրառումը: Օտարերկրյա ուղղակի ներդրումների առանձնահատկությունը ներդրողին տվյալ ձեռնարկության կառավարման մեջ արդյունավետ ձայնի շնորհումն է: Միջազգային արժութային հիմնադրամի (AMF) կողմից որպես չափանիշ ընտրված է ձայնի իրավունք տրվող բաժնետոմսերի 10%–ը, քանի որ այն համարվում է նշանակալից մասնակցություն ձեռնարկության կառավարման մեջ[1]: Օտարերկրյա ուղղակի ներդրումների կարևորությունը ներդրումային միջավայրի բարելավման և, ընդանհրապես տնտեսության զարգացման և տնտեսական աճի ապահովման գործում այն է, որ օտարերկրյա ներդրողների կողմից ընդունող երկիր է բերվում ոչ միայն մտավոր սեփականություն և նոու-հաու, այլև նոր շուկաների բացահայտում և հասանելիություն, ինչպես նաև այնտեղ ներգործելու հնարավորություն: Օտարերկրյա ներդրումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը ձեակերպվել է 1994թ-ին «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքի ընդունմամբ, որը, համաձայն ամերիկյան փորձագետների գնահատականների ամենաառաջադիմականն ու ժողովրդավարականն է ԱՊՀ մյուս երկրների համանման օրենքների մեջ: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով հայտարարվել է «բաց դռների» քաղաքականություն և ճանաչվել օտարերկրյա ներդրումների և օտարերկրյա ներդրողների պաշտպանության կարևորությունը: Բացի այդ, ազգային ռեժիմի սահմաններում, օտարերկրյա ներդրողների համար սահմանվել են որոշակի հարկային և մաքսային արտոնություններ: Սակայն առանձնակի ուշադրության է արժանի այն փաստը, որ շատ անգամ, տեղական

[1] 10%-ից պակաս բաժնեմասը համարվում է պորտֆելային ներդրում, որն ավելի հաճախ կրում է սպեկուլյատիվ բնույթ:

կապիտալը դուրս է գալիս և երկիր է մտնում որպես օտարերկրյա ներդրում օրենսդրությամբ սահմանված այդ արտոնություններից օգտվելու համար:

1991-93թթ. Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները բավականին չնչին էին. և իրավիճակը կտրուկ փոխվեց 1994թ-ին. երբ մի շարք գործընթացներ, այդ թվում նաև «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի ընդունումը, դրական ազդեցություն ունեցան Հայաստանում ներդրումային միջավայրի բարելավման և օտարերկրյա ուղղակի ներդրումների աճի վրա: 1994թ-ին Հայաստանին առաջին վարկերը տվեցին Համաշխարհային բանկը և Միջազգային արժութային հիմնադրամը: Միջազգային ֆինանսական հաստատությունների հետ նման համագործակցությունը ևս նպաստեց օտարերկրյա ուղղակի ներդրումների աճին: Խնդիրը նրանումն է, որ օտարերկրյա ներդրողները ձգտում են գործունեություն ծավալել այն երկրներում, որտեղ գործում են վերոհիշյալ ֆինանսական կազմակերպությունները: Հետևանքը եղավ այն, որ 1995թ-ին Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը կազմեց 24,4 մլն դոլար (1994թ-ին այս ցուցանիշը բավականին ցածր էր և կազմում էր ընդամենը 9,2մլն դոլար): 1996թ-ին օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը նվազեց՝ կազմելով 17,57 մլն դոլար: 1997-98թթ նկատվեց օտարերկրյա ուղղակի ներդրումների կտրուկ աճ՝ 1997թ-ն կազմելով 51,9 մլն դոլար, որը շուրջ 3 անգամ ավելին է 1996 թվականի նույն ցուցանիշից: 1998թ-ին արձանագրվեց օտարերկրյա ուղղակի ներդրումների ամենամեծ ծավալը՝ 232,4 մլն դոլար, որը մոտ 5 անգամ գերազանցում է 1997թ-ի նույն ցուցանիշին: 1998թ-ին օտարերկրյա ուղղակի ներդրումների մեծ մասը կատարվել է Հունաստանից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից և Կանադայից: 1998թ-ին Հունաստանից կատարված ներդրումների մեծ ծավալը պայմանավորված է հունական OTE ընկերության կողմից միջազգային մրցույթով «ԱրմենՏել»-ի գնման հետ: Նույն թվականին միջազգային մրցույթով Բրիտանական «Furano Ltd» ընկերությանն է վաճառվել ադամանդի մշակման DCA ընկերությունը: Ֆրանսիական ներդրումների գերակշիռ մասը բաժին է ընկնում Երևանի Կոնյակի գործարանին, որը ևս միջազգային մրցույթով վաճառվեց ֆրանսիական «Պեռնո Ռիկար» ընկերությանը: Կանադական ներդրումները հիմնականում բաժին են ընկել ծխախոտագործությանը և տեքստիլ արդյունաբերությանը: Ինչպես երևում է թվարկումներից, Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների մեջ մեծ թիվ են կազմել միջազգային մրցույթով ձեռնարկությունների վաճառքից ստացված միջոցները: Միայն

1998թ.-ի առաջին ինը ամիսների ընթացքում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումներից (151,7մլն դոլար) 73,3 մլն դոլարը ստացվել է միջազգային մրցույթով ձեռնարկությունների վաճառքից: 1999թ-ին օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը 1998թ-ի համեմատ նվազեց 1,7 անգամ կազմելով 138,9 մլն դոլար: 2000թ, առաջին ինը ամիսների ընթացքում օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմել են 99,7 մլն դոլար: Ընդհանուր առմամբ, Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը 1988-99թթ և 2000թ, առաջին ինը ամիսների ընթացքում կազմել է շուրջ 606,9 մլն դոլար, ընդ որում դրանց մեծ մասը կատարվել է վերջին 3 տարիներին՝ գումարային ծավալով մոտ 471 մլն դոլար, այսինքն օտարերկրյա ուղղակի ներդրումների գումարային ծավալի 77,6%-ը: 2000թ-ի ինը ամիսների ընթացքում, 1999թ-ի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալի որոշակի նվազումը պայմանավորված է 1999թ-ի առաջին ինը ամիսների ընթացքում օտարերկրյա կազմակերպությունների սեփականաշնորհումից ստացված մեծ ծավալ կազմող գումարներով, իսկ դրա չեզոքցման պայմաններում, 2000թ-ի առաջին ինը ամիսների ընթացքում արձանագրվել է ուղղակի ներդրումների աճ 1,7 անգամ: Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերը 1988-99թթ և 2000թ առաջին ինը ամիսների համար ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերը 1988-99թթ[1] և 2000թ ինը ամիսներին (մլն. դոլար)

	1988 1989	1990	1991	1992	1993	1994
Ընդամենը ներդրումներ	5,7	3,9	19,6	2,4	99,9	88,7
այդ թվում՝ ուղղակի ներդրումներ	5,7	3,9	19,6	2,4	0,8	9,2
ուղղակի ներդրումների տեսակարար կշիռը (%)	100	100	100	100	0,8	10,3

[1] 1988-98թթ տվյալները տե՛ս «Տնտեսական բարեփոխումների և առանձնահատկությունների փուլերը Հայաստանում»(վիճակագրական պատկեր): ՀՀ Վիճակագրության, վերլուծությունների և պետական ռեգիստրի նախարարություն (01.01.1999) էջ 11:

1995	1996	1997	1998	1999[1]	2000թ առաջին ինը ամիսներ
222,0	286.0	287,8	406.0[2]	156,0	140.6
24,4	17,57	51,9	232,4	138,9	99,7
10,9	6,1	18,0	57,2	89	70,9

Պաշտոնական վիճակագրության համաձայն. 1998թ-ից մինչև 2001թ-ի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում. Հայաստանում գրանցվել են շուրջ 1908 օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկություններ: Հիմնականում օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ընկերությունները ստեղծվել են ՌԴ-ի. իրանի. ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ներդրողների մասնակցությամբ. որտեղ կան խոշոր հայկական համայնքներ:

Օտարերկրյա ներդրողների կողմից ներկայումս մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում այն ոլորտների նկատմամբ. ինչպիսին է առամանդի մշակման արդյունաբերությունը. զբոսաշրջությունը. սննդի արդյունաբերությունը և հեռահաղորդակցությունը:[3]

Առաջիկայում ներդրումային ծրագրեր են իրականացվելու «Franck-Muller Watchand S.A» ընկերության կողմից. որը մինչ օրս կատարել է 400հազ. ԱՄՆ դոլարի ներդրում և արտադրությունը սկսելու նպատակով պատրաստվում է կատարել 2,5-3 մլն դոլարի ներդրում, « LLD DIAMONDS LTD» իսրաելական ընկերության կողմից կատարվել է 370հազ. դոլարի ներդրում և ընկերությունը ներկայումս պարտավորվել է ներդնել ևս 2,3 մլն ԱՄՆ դոլար. «FURFANO LTD» անգլիական ընկերության կողմից 5,8մլն ԱՄՆ դոլարով գնվել է «DCA» ՓԲԸ –ի 100% բաժնետոմսերի փաթեթը և առաջիկա 1-2 տարում նախատեսում է ավելացնել ներդրումները 2մլն դոլարի չափով և այլն:

Չնայած. որ Հայաստանում գործունեություն ծավալած ներդրողներից շատերը ձգտում են առաջիկա 2-3 տարում ավելացնել ներդրումների

---

[1] 1999թ և 2000թ առաջին ինը ամիսների տվյալները կազմված են ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության նյութերով:

[2] Ներառյալ Եվրոմիության վերածևակերպված վարկը:

[3] Սրանք այն ճյուղերն են. որոնք ըստ կառավարության նախնական ընտրության համարվում են Հայաստանի մրցակցային առավելություն կրող ճյուղեր:

ծավալները, սակայն պետք է կարևորել այն հանգամանքը, որ նրանցից շատերը դժգոհում են վարչարարական խոչընդոտներից և բյուրոկրատական քաշքշուկներից: Այսինքն, ինչպես սկզբում նշվեց, մի կողմից մշակվել է բավականին հրապուրիչ օրենսդրական դաշտ, իսկ օրենքների կիրառման առումով դեռևս լուրջ թերություններ են առկա , ինչը շարունակում է ետ մղել և օտարերկրյա և տեղական ներդրողներին: Այս առումով առավել առաջնային է օրենքների կիրառման ապահովումը, քան նոր օրենքների ընդունումը և օրենքների փոփոխությունները, ինչը ներդրողների մոտ ստեղծում է անորոշության և ռիսկի բարձր աստիճան:

2000թ-ի ընթացքում ծավալուն աշխատանքներ են տարվել նաև ներդրումային զգալի ներուժ ունեցող Հայաստանի հիմնական գործընկեր երկրների հետ երկկողմ իրավապայմանագրային դաշտի ձևավորման ուղղությամբ, և շարունակել են բանակցությունները ներդրումները կարգավորող իրավապայմանագրային դաշտի կարևոր մաս կազմող «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» միջկառավարական համաձայնագրերի ստորագրման և վավերացման ուղղությամբ: Բացի այդ, օտարերկրյա ներդրողների հետ աշխատանքի համակարգման նպատակով, ՀՀ Կառավարության թիվ 83 որոշմամբ, Զարգացման հայկական գործակալությունում ստեղծվել է «Մեկ կանգառի կենտրոն», որի հիմնական նպատակն է Հայաստանում օտարերկրյա ներդրողների գործունեությունը կարգավորել միջազգային չափանիշներին համապատասխան մեկ գրասենյակի միջոցով: Բնական է, որ վերը նշված բոլոր միջոցառումների արդյունավետ իրագործումը կարող է առավել գրավիչ դարձնել Հայաստանի ներդրումային միջավայրը և խթանել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը:

Այսպիսով, օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանման և ծավալների մեծացման համար, առաջիկայում պետք է մշակել միջոցառումների համալիր ծրագիր երկու ուղղություններով՝

ապահովել օրենքների ճիշտ կիրառությունը՝ հնարավորինս խուսափելով օրենքների փոփոխություններից և նոր օրենքների ընդունումից,

իրականացնել ծրագրեր վարչարարական խոչընդոտները և բյուրոկրատական քաշքշուկները վերացնելու ուղղությամբ: